**«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ Գործադիր տնօրենի**
**ՈՐՈՇՈՒՄ**
**ԹԻՎ 14-12-23**

*«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող բրոքերային, ակտիվների կառավարման, պահառուական և հարակից այլ ծառայությունների սակագներում փոփոխություններ կատարելու Հաճախորդներին մարժային գործարքների կնքման նպատակով տրամադրվող փոխառությունների համար սահմանվող տոկոսադրույքների, CFD-ներով գործարքների օվերնայթ տոկոսադրույքի, Ֆյուչերսային պայմանագրերով գործարքների միջնորդավճարների վերաբերյալ*

14 դեկտեմբերի 2023թ.

Ղեկավարվելով «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ կանոնադրության 60-րդ կետով՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 03/01/2024թ.-ից ուժը կորցրած ճանաչել 30/10/2023թ.-ի Գործադիր տնօրենի թիվ 010-23-1 որոշմամբ հաստատված «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող բրոքերային, ակտիվների կառավարման, պահառուական և հարակից այլ ծառայությունների սակագները:
2. Հաստատել «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող բրոքերային, ակտիվների կառավարման, պահառուական և հարակից այլ ծառայությունների սակագները (այսուհետ՝ Սակագներ) նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելված 1-ի:
3. Սույն որոշմամբ հաստատված Սակագներն ուժի մեջ են մտնում 03/01/2024թ.-ից:
4. «ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի *կողմից Հաճախորդներին մարժային գործարքների կնքման նպատակով տրամադրվող փոխառությունների դիմաց վճարվող տոկոսադրույքները*՝ գանձել ըստ կայքում հրապարակված տոկոսադրույքների:
5. Աղյուսակ 1-ում նշված արժույթների համար մարժային գործարքների ժամանակ նախնական մարժայի դրույքաչափը սահմանել 5%, իսկ նվազագույն մարժայի դրույքաչափը՝ 3%:
6. CFD-ներով գործարքների օվերնայթ (փոխառության) տոկոսադրույքները սահմանել ըստ կայքում հրապարակված Աղյուսակ 2-ի:
7. Ամերիկյան բաժնետոմսերով և բորսայական ֆոնդերի փայերով (ETF) գործարքների ժամանակ նախնական մարժայի դրույքաչափը սահմանել 50%, իսկ նվազագույն մարժայի դրույքաչափը՝ 30%:
8. Արժեթղթերով բաց դիրքերի օվերնայթ (փոխառության) տոկոսադրույքը սահմանել ըստ կայքում հրապարակված Աղյուսակ 3-ի:

9. Ֆյուչերսային պայմանագրերով գործարքների միջնորդավճարները սահմանել ըստ կայքում հրապարակված Աղյուսակ 4-ի:

«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

*Հավելված 1*
*«ԷՓՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող բրոքերային, ակտիվների կառավարման, պահառուական և հարակից այլ ծառայությունների սակագներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Գործադիր տնօրենի 14.12.2023թ.-ի թիվ 14-12-23 որոշման*

| Ծառայության անվանումը | Սակագինը [1] |
|---|---|
| **1. Հաշվի սպասարկում** | |
| 1.1. Հաշվի բացում | Անվճար |
| 1.2. Հաշվի սպասարկում | Անվճար |
| 1.3. Տեղեկանքների և քաղվածքների տրամադրում | |
| 1.3.1. Հաշվի մնացորդի, կատարված գործարքների վերաբերյալ | Անվճար |
| 1.3.2. Այլ (հայերեն) | 10,000 ՀՀ դրամ |
| 1.3.3. Այլ (անգլերեն/ռուսերեն) | USD 50, կամ համարժեք այլ արժույթ |
| 1.3.4. Աուդիտորական հարցման պատասխանի տրամադրում | |
| 1.3.4.1 ՀՀ ռեզիդենտների համար | 15,000 ՀՀ դրամ |
| 1.3.4.2 ՀՀ ոչ ռեզիդենտների համար | USD 40, կամ համարժեք այլ արժույթ |
| 1.4. Արժեթղթերի փոխանցում [2] | |
| 1.4.1. Արժեթղթերի ներպահառուական փոխանցում (DVP/FOP) | |
| 1.4.1.1. ՀՀ ռեզիդենտների դեպքում | 10,000 ՀՀ դրամ |
| 1.4.1.2. ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում | USD 50, կամ համարժեք այլ արժույթ |
| 1.4.2. Միջպահառուական | |
| 1.4.2.1. DVP սկզբունքով արժեթղթերի փոխանցում | |
| 1.4.2.1.1. ՀՀ ռեզիդենտների դեպքում | Գործարքի ծավալի 0,1-0,75%, նվազագույնը 100,000 ՀՀ դրամ |
| 1.4.2.1.2. ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում | Գործարքի ծավալի 0,1-0,75%, նվազագույնը USD 300, կամ համարժեք այլ արժույթ |
| 1.4.2.2. FOP սկզբունքով բաժնային արժեթղթերի փոխանցում | Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքի |
| 1.4.2.2.1. ՀՀ ռեզիդենտների դեպքում | 0,1-0,75%, նվազագույնը 100,000 ՀՀ դրամ |
| 1.4.2.2.2. ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում | 0,1-0,75%, նվազագույնը USD 300, կամ համարժեք այլ արժույթ |
| 1.4.2.3. FOP սկզբունքով պարտքային արժեթղթերի փոխանցում | Գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքի |
| 1.4.2.3.1 ՀՀ ռեզիդենտների դեպքում | 0,1-0,75%, նվազագույնը 100,000 ՀՀ դրամ |
| 1.4.2.3.2 ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում | 0,1-0,75%, նվազագույնը USD 300, կամ համարժեք այլ արժույթ |
| 1.5. Արժեթղթերի պահառություն [2] | Բաժնային արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքի (պարտքային արժեթղթերի ընդհանուր անվանական |

| | |
|---|---|
| | արժեքի) տարեկան 0-0,75%-ը, (Սակագինը գանձվում է ամսական պարբերականությամբ) |
| *1.6. Դրամական միջոցների ելքագրում/Արժեթղթերի փոխանցում* | |
| *1.6.1. Դրամական միջոցները (արժեթղթերը) հաշվին մինչև 6 ամիս պահելու դեպքում* | 0-2% |
| *1.6.2. Դրամական միջոցները (արժեթղթերը) հաշվին 6 ամսից ավել պահելու դեպքում* | 0-1% |
| *1.7. Հաշվի փակում* | Անվճար |
| ***2. Բաժնետոմսերով և բորսայական ֆոնդերի փայերով (ETF) գործարքների իրականացում*** | |
| *2.1. ՀՀ շուկա* | |
| *2.1.1. ՀՀ ռեզիդենտների դեպքում* | 0.3% գործարքի ծավալից, նվազագունը 7,000 ՀՀ դրամ |
| *2.1.2.ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում* | 0.3% գործարքի ծավալից, նվազագունը USD 20 |
| *2.2. Միջազգային շուկա* | |
| *2.2.1. ԱՄՆ* | USD 0,036 յուր. արժեթղթի համար, նվազագունը USD 1 |
| *2.2.2. Կանադա* | CAD 0,04 յուր. արժեթղթի համար, նվազագունը CAD 1 |
| *2.2.3. Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա* | 0.1% գործարքի ծավալից, նվազագունը 1 USD (կամ 1 EUR, կամ 1 GBP, կամ այլ արժույթ, որով արժեթուղթը գնանշվում է) |
| *2.2.4. Ավստրալիա* | 0.24% գործարքի ծավալից, նվազագունը AUD 12 |
| *2.2.5.Այլ (այդ թվում ՌԴ)* [3] | 0,5-3% գործարքի ծավալից |
| *2.2.6. Կարճ դիրքերի համար հաշվարկվող օվերնայթ (փոխառության) տոկոսադրույք* | *Սահմանվում են ըստ կայքում հրապարակված Աղյուսակ 3-ի* |
| ***3. Պարտատոմսերով գործարքների իրականացում*** | |
| *3.1. ԱՄՆ, Եվրոպա* | 0.18% գործարքի ծավալից, նվազագունը 75 USD (կամ 75 EUR, կամ 75 GBP, կամ այլ արժույթ, որով պարտատոմսը գնանշվում է) |
| *3.2. ՀՀ առաջնային շուկա* | |
| *3.2.1. Ռեզիդենտների դեպքում* | 0.1% գործարքի ծավալից, նվազագույնը 7,000 ՀՀ դրամ |
| *3.2.2. Ոչ ռեզիդենտների դեպքում* | 0.1% գործարքի ծավալից, նվազագույնը USD 20, կամ համարժեք այլ արժույթ |
| *3.3. ՀՀ երկրորդային շուկա* | |
| *3.3.1. Ռեզիդենտների դեպքում* | 0.1% գործարքի ծավալից, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ |
| *3.3.2. Ոչ ռեզիդենտների դեպքում* | 0.1% գործարքի ծավալից, նվազագույնը USD 10, կամ համարժեք այլ արժույթ |
| *3.4. Այլ (այդ թվում ՌԴ)* [3] | 0,05-3% գործարքի ծավալից (Տեղեկատվության բացակայության դեպքում՝ անվանական ծավալից) |
| ***4. Կառուցվածքային արժեթղթերով գործարքների իրականացում*** | 0-5% գործարքի ծավալից |
| ***5. Օպցիոններով գործարքների իրականացում*** | |
| *5.1. ԱՄՆ* | |

| | |
|---|---|
| *5.1.1. Բաժնետոմսերի և բորսայական ֆոնդերի փայերի (ETF) վրա հիմնված* | USD 4 յուր. պայմանագրի համար |
| *5.1.2. Այլ* | 5 USD (կամ 5 EUR, կամ 5 GBP, կամ այլ արժույթ, որով օպցիոնը գնանշվում է) յուր. պայմանագրի համար |
| *5.2. Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա* | 5 USD (կամ 5 EUR, կամ 5 GBP, կամ այլ արժույթ, որով օպցիոնը գնանշվում է) յուր. պայմանագրի համար |
| ***6. Ֆյուչերսներով գործարքների իրականացում*** | *Սահմանվում են ըստ կայքում հրապարակված Աղյուսակ 4-ի* |
| ***7. Արժեթղթերով գործարքների կապարման նպատակով փոխառության տրամադրում հաճախորդներին*** | Սակագինը սահմանվում է յուրաքանչյուր աշխատանքային օր և հասանելի է Ընկերության կայքում կամ Ընկերության կողմից տրամադրվող ծրագրային տերմինալում |
| ***8. Արտարժութային փոխարկում*** | |
| *8.1. առանց առևտրային հարթակի* | |
| *8.1.1. AMD և/կամ RUB ներառող արտարժութային զույգեր* | 0-1% գործարքի ծավալից |
| *8.1.2. Այլ արժութային զույգեր* | 0-0,5% գործարքի ծավալից |
| *8.2. առևտրային հարթակի միջոցով[4]* | |
| *8.2.1. EUR/USD արտարժութային զույգ* | 0% գործարքի ծավալից |
| *8.2.2. Արտարժութային հիմնական զույգեր (AUD/ USD, GBP/USD, USD/JPY, USD/CHF, USD/CAD, NZD/USD)* | 0.25% գործարքի ծավալից |
| *8.2.3. Այլ արժութային զույգեր* | 0.4% գործարքի ծավալից |
| ***9. CFD-ներով գործարքների իրականացում*** | |
| *9.1. Մետաղներ* | |
| *9.1.1 Արծաթ/ԱՄՆ դոլար* | *0.02% գործարքի ծավալից* |
| *9.1.2.Ոսկի/ԱՄՆ դոլար* | 0.02% գործարքի ծավալից |
| *9.1.3. Ոսկի/ Ավստրալական դոլար* | 0.02% գործարքի ծավալից |
| *9.1.4.Ոսկի/Եվրո* | *0.02% գործարքի ծավալից* |
| *9.2. Արտարժութային հիմնական զույգեր* | *0.01% գործարքի ծավալից* |
| *9.3. CFD-ներով գործարքների համար հաշվարկվող օվերնայթ (փոխառության) տոկոսադրույքներ* | *Սահմանվում են ըստ կայքում հրապարակված Աղյուսակ 2-ի* |
| ***10. Արժեթղթերի արգելադրում և գրավադրում*** | Անվճար |
| ***11. Արժեթղթերի արգելադրման և գրավադրման դադարեցում*** | Անվճար |
| ***12. Արժեթղթերի փաթեթի կառավարում*** | Պայմանագրային |
| ***13. Այլ ծառայություններ*** | Պայմանագրային |

[1] Սակագները ներառում են միայն Ընկերության Գործակալների ստանդարտ միջնորդավճարները (եթե Սակագներով այլ բան սահմանված չէ), մինչդեռ կնքվող գործարքների համար Ընկերության Գործակալների կողմից գանձված ոչ ստանդարտ սակագները (ներառյալ բանկային փոխանցումների) ենթակա են փոխհատուցման հաճախորդի կողմից:
Հաճախորդի հաշվին համապատասխան արժույթով միջոցների բացակայության դեպքում, Ընկերությունն իրավունք ունի միջնորդավճարի գանձման նպատակով իրականացնել հաճախորդի այլ արժույթով արտահայտված միջոցների փոխարկում միջնորդավճարների չափով՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Վերոնշյալ դեպքում միջնորդավճարների գանձումն իրականացվում է Ընկերության հետ համագործակցող առևտրային բանկերի կողմից առաջրկվող այն փոխարժեքով, որն առավել բարենպաստ է հաճախորդի համար: Արժեթղթերի շուկայական արժեքի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հեղինակավոր աղբյուրներից (օրինակ, Bloomberg) ստացված տվյալները: Շուկայական արժեքի բացակայության դեպքում հիմք է ընդունվում տվյալ արժեթղթով՝ Սակագնի հաշվարկմանը նախորդող առավելագույնը վերջին 6 ամսվա ընթացքում կատարված բորսայական վերջին գործարքի գինը: Վերջինիս բացակայության դեպքում արժեթղթի շուկայական արժեքն ընդունվում է 5 ԱՄՆ դոլար:

Հաճախորդի գործունեության, նրա կողմից կատարվող գործարքների բնույթից և ծավալից կախված, Ընկերության Գործադիր տնօրենի որոշմամբ, Հաճախորդի համար կարող են սահմանվել այլ Սակագներ:

[2] Սակագնի հաշվարկման համար հիմք են հանդիսանում յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ հաճախորդի հաշվին առկա արժեթղթերը: Արժեթղթերի զրոյական մնացորդով հաշիվների համար նվազագույն Սակագին չի կիրառվում: Սակագինը չի ներառում Գործակալի կողմից Ընկերությունից գանձվող վճարները: Հաճախորդի գործարքի կատարման նպատակով Ընկերության Գործակալների կողմից գանձված միջնորդավճարները ենթակա են փոխհատուցման Հաճախորդի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ Ընկերությունից անկախ պատճառներով տվյալ գործարքը չի կատարվում:

[3] Սույն ենթակետում նշված միջնորդավճարը կիրառվում է նաև ՌԴ պետական/գանձապետական և կորպորատիվ արժեթղթերի (այդ թվում՝ արտաբորսայական), ինչպես նաև ՌԴ արժեթղթերի վրա կառուցված դեպոզիտար ստացականների դեպքում: Սույն միջնորդավճարը չի ներառում Ընկերության Գործակալների կողմից գանձվող միջնորդավճարները:

Ի հավելումն վերը նշված միջնորդավճարների, հաճախորդից գանձվում են նաև հետևյալ վճարները՝

- Մեծ Բրիտանիայի դրոշմանիշի տուրք՝ գործարքի արժեքի 0,5%-ը (գնման գործարքների համար), մանրամասն՝ այստեղ,
- PTM (Panel on Takeovers and Mergers) վճար Մեծ Բրիտանիայում՝ 1 ֆունտ պայմանագրի համար, այն դեպքերում, երբ գործարքի արժեքը գերազանցում է 10,000 ֆունտ ստեռլինգը, մանրամասն՝ այստեղ,
- Ֆրանսիա՝ 0,3% որոշ արժեթղթերի գնման դեպքում, մանրամասն՝ այստեղ:[3] Սույն ենթակետում նշված միջնորդավճարը կիրառվում է նաև ՌԴ պետական/գանձապետական և կորպորատիվ արժեթղթերի վրա:

[4] Սակագների գանձումն իրականացվում է արտարժութային զույգի հայտարարում նշված արժույթով: